

3149

891.995

14-28

2012

1394ա

ԽԱՉՍՏՈՒՐ ԽԱՉՍՐԵԱՆ

891.39 Ն. 43


Խ-28
ա

ԾՆՆԴԵԱՆ ԸՆԾԱՅ

1920
ԾԵԼ

Մանկական գրքոյկ

(1 պատկերով)



1906



Սենեակում պառկած էր խիստ տենդի մէջ մի երեխայ և իր աչքերն անթարթ բևեռել էր առաստաղին:

Նրա՝ թղթի պէս գունատ դէմքն ամբողջովին անշարժ էր, միայն շրթունքներն էին երբեմբ կարծես մի բան փսփսում:

Երեխայի կողքին՝ սեղանին ցածր կռացած, անվերջ կարում էր նրա մայրը՝ ջահել դերձակունին, և կարի մեքենայի շխկշխկոցն էր միայն, որ ընդմիջում էր սենեակի ծանր լութիւնը:

Կինարմատը խորը մտածմունքի մէջ էր:

Վաղը նրա Սուրէնիկի ծննդեան օրն է: Տէր Աստուած, ինչպէս ուրախ անցկացրին նրանք այդ օրն անցեալ տարի, երբ մարդը զեռ կենդանի էր: Իսկ այժմ...

Նա աւելի ցածր իջեցրեց իր տանջւած գրլուխը և արտասուքի պէս մի բան գլորեց նրա աչքից... Եւ աւելի արագ սկսեց նրա ձեռքին պտտել մեքենայի անիւր:

Մի՞թէ չի կարողանայ վաղը մի ուրախութիւն, մի չնչին ուրախութիւն պատճառել իր Սուրէնիկին, որ իր կեանքի միակ ճրագն էր, իր միակ մխիթարութիւնը, իր յոյսը, իր անմեն ինչը:

Եւ կինարմատը մտքում հաշուում էր թէ քանի անգամ արժանաւ իր կտոյի մտածո: Ան էլ յա

Дозволено цензурою. Тифлисъ, 21 марта 1906 г.

115397-42

լաւ է թէ չնչին պատճառով տրիկինը վարձից մի բան չը կտրի...

Պէտք էր վճարել դեղի փող, պէտք էր գնել վառիկ և սպիտակ հաց հիւանդի համար, պէտք էր մի երկու կտոր փայտ գնել:...

Իսկ եթէ տրիկինը այս գիշեր չը վճարի, ա- սի՛ մէկ- երկու օրից յետոյ եկէք...

Եւ դերձակուհու կրծքից ակամայ հոգւոց դուրս թռաւ, թէև նա գիտէր որ բժիշկը պատ- ւիրել է ոչնչով չը վշտացնել հիւանդին, չը լինի թէ տկարութիւնը սաստկանայ:

Երեխան անհանգիստ շարժւեց անկողնի մէջ: Մայրը ետ նայեց ու բռնագրօսիկ ժպտաց...

— Ինչո՞ւ չես խօսում, Սուրէն ջան, — ասաց նա, — այս է կարս վերջացնում եմ, կը դամ, կողքիդ կը նստեմ:

Երեխան մտազբաղ երկար նայում էր մօր աչքերին: Յետոյ նա՛ ամեն մի խօսք երկարաց- նելով, կարծես ինքն իր հետ խօսելով, ասաց.

— Մի՛թէ բոլոր երեխաներն էլ ընծաներ են ստանում ծննդեան օրը:

— Դու էլ կըստանաս, անպատճառ կըստա- նաս, — շտապով կտրեց նրա հարցը խեղճ մայ- րը, և նրա սիրտը կսկծից ճմլւեց:

Սուրէնը նստեց տեղաշորերի մէջ:

— Այնպէս չէ, մայրիկ, ծննդեան օրը տար- ւայ ամենաուրախ օրն է, այո՛: Վաղը ես քանի

— Այո՛, ինը տարեկան: Իսկ յիշում ես՝ ան- ցեալ տարի հայրիկը առաւօտ վաղ մօտեցաւ ինձ և համբուրեց ուղիղ ուլթն անդամ, մէկ-մէկ համբուրեց ու ասաց. — «Այսօր ուղիղ ուլթը տա- րեկան ես, ես էլ ուղիղ ուլթն անդամ համբու- րեցի»:

— Ես էլ վաղը քեզ ուղիղ ինն անգամ կը համբուրեմ:

— Եւ...

— Եւ կը նւիրեմ քեզ քո ուզած ընծան: Սիր- տըդ ինչ է ուզում, իմ աչքի լոյս:

— Մի սիրուն պատկերազարդ գիրք, մայ- րիկ ջան, շքեղ պատկերներով, որի մէջ նկար- ւած լինեն և զանազան կենդանիներ, և մար- դիկ, և սարեր: Ես միշտ կարտանկարէի իմ տետ- րի մէջ:...

Մայրը յիշեց որ մի այգպիսի գիրք ամե- նաքիչը յիսուն կոպէկ արժէ, ու կրկին մի ա- կամայ «ախ» դուրս պրծաւ նրա կրծքից:

Տղան անհանգստութեամբ նայեց նրա ե- րեսին:

— Մայրիկ, հիւսնդ հօ չես, — յանկարծ հար- ցրեց նա:

Մայրն իսկոյն տեղից վեր կացաւ և արագ մօտեցաւ Սուրէնին: Նա նստեց տղայի կողքին ու սկսեց իր նիհար ձեռներով շոյել նրա գլու- խըն և դէմքը ու ժպտալ:

Եւ նրան թւում էր թէ այդ երեկոյ տղայի ձակատը աւելի է այրում, սիրտը աւելի է բա-

Ան նա ասաց.

— 2է, իմ որդիս. վաղը քո ծննդեան օրն է, իսկ ծննդեան օրը ուրախ պիտի անցնենք: Տես որ անպատճառ վաղը առողջ լինես:

Երեխան ամուր գրկեց մայրիկին ու յետոյ նորից պառկեց բարձի վրա:

Իսկ կինը կրկին իր կարը ձեռն առաւ, շարունակեց կարել թաւշէ զգեստը, որ առանց այն էլ ուշացրել էր...

Եւ նրան անվերջ մաշում էր այն միտքը՝ թէ ինչով պիտի գնի խոստացած ընծան իր անգին Սուրէնի համար:...

Ձեռագործի վերջին կարը կթնել վերջացրել էր. նա զգուշութեամբ ծախեց զգեստը մեծ թրղ-թարկղի մէջ, ապա մօտեցաւ երեխային ու ասաց.

— Սուրէն ջան, բիշ ժամանակ քեզ մենակ եմ թողնելու, դու շեւ վախենայ, չէ:

— 2է որ, մայրիկ ջան, ես միշտ մենակ եմ մնում, երբ դու գործով տանից գնում ես: Գիտես, մայրիկ, մենակ մնացած ժամանակս ինչի մասին եմ մտածում. միշտ քո մասին. և երբէք չեմ ախրում: Բայց այսօր շուտով դարձիր տուն. ես ուզում եմ որ այս գիշերը շուտով լուսանայ,

— ասաց Սուրէնը և փոքրիկ ձեռներով փաթաթեց մօր վզով:

— Ես իսկոյն կը գամ. այստեղ մօտիկ է, — և մայրը անհատնելի սիրով նայեց երեխային և

Լուսինն երկնակամարն էր բարձրացել ու նրա ոսկեգոյն լոյսը լցնում էր սենեակը: Սուրէնը սպասում էր: Նա պառկած էր անշարժ և ականջ էր դնում՝ չի լսի արդեօք մօր դռնաձայնը, և նրան երբեմն թւում էր թէ անա բարձրանում է սանդուխտով մի տղամարդ, և այդ տղամարդը իր հայրն է, և նա ձեռքին ունի մի մեծ գիրք, պատկերազարդ գիրք, և նա մտնում է սենեակը ու ասում. «Բարի լոյս, Սուրէն, այսօր դու ճիշտ ինը տարեկան ես. արի, ես քեզ ինն անգամ համբուրեմ: Մէկ... երկու...» Եւ Սուրէնը իր ձեռքը պարզում էր գէպի այն գիրքը, ու զգում էր իր երեսին հայրիկի շնչառութեան տաքութիւնը, և նրա կոշտ բեխերի ծակծակոցը...

Հիւանդ երեխան գառանցում էր:

Երբ դերձակուհին մտնում է զգեստադրոջ տունը, աղախինը նախասենեակում հանդիպեց նրան հետեւալ խօսքերով.

— Ինչո՞ւ այդպէս ուշացրիր. տիկինը խիստ չարանում է:

Աղախինը ձեռքից առաւ թղթարկը, տարաւ միւս սենեակը: Նա նայում էր շուրջը: Դռան բացւածքից երևում էր ամբողջ լուսաւորւած դահլիճը: Ի՞նչ կահկարասիք, ի՞նչ հայելիներ, թանգազին գորգեր: Իսկ մետաքսէ բազմոցի վրայ նստած գըւած էր մի մեծ՝ երեխայաչափ տիկին՝ զեղեցիկ հագնւած... Ամեն կողմից

Գերձակուհին ակնապիշ նայում էր այդ բո-
լոր շքեղութիւններին. նա մտքով տարւեց...
Այդ տիկնիկի փողով կարելի էր Սուրէնի համար
ոչ թէ միայն պատկերազարդ գիրք գնել, այլ և
լաւ խնամել, բժշկել նրան:

Գերձակուհին շնչում էր ծանր...

Վերջապէս աղախինը յայտնւեց և տւեց նը-
բան դատարկ թղթարկղը:

Գերձակուհին խնդրեց՝ որ իր ձեռքի վարձը
վճարեն:

— Այսօր հիւրեր կան մեզ մօտ, բոլորովին
ժամանակ չունեն քեզանով զբաղելու, — ասաց
աղախինը և հեռացաւ կրկին միւս սենեակը: Մի
քանի բոպէից յետոյ նա դուրս բերեց հաշիւը:

— Տիկինը կը վճարի այն ժամանակ, երբ
կը համոզւի որ գգեստը օրիորդի հագին լաւ է
նստում, իսկ հիմա չափելու ժամանակ չէ:

Դժբախտ կինն այս խօսքերի վրայ բիշ մը-
նաց ընկնէր, եթէ աթոռից չը բռնէր: Նա դժա-
րութեամբ պատասխանեց.

— Ասա տիկնոջը որ այսօր վճարի. եթէ մի
բան պակաս է, կը դամ կուղղեմ: Երեխաս տա-
նը հիւանդ պառկած է:

— Երեխադ հիւանդ է: Հիւանդութեան ա-
նունը չը տաս, թէ չէ՝ տիկինը շորը բոլորովին
չի վերցնի. նա սաստիկ վախենում է վարակիչ
հիւանդութիւններից, — ասաց աղախինն այնպիսի
ձայնով, որ գերձակուհին էլ ոչինչ չը կարողա-

Նա դողդոջուն քայլերով իջաւ սանդուխտ-
ներից: Դուրս գալով փողոցը, նա կըթնեց շի-
նութեան պատին և բարձրաձայն հեծկտում
էր: Ի՞նչ անի այժմ, ո՞ր դիմի: Նա մտաբերեց
որ իրեն պարտ էին էլի ուրիշ երկու կանայք:
Մէկը հէնց պատէրի ժամանակն էր յայտնել, որ
տօներից՝ յետոյ կը վճարի. իսկ միւսը սպառ-
նացել էր այլ ևս պատէր չը տալ՝ եթէ վճարի
մասին խօսք բաց կանի: Ամեն կողմից ճանա-
պարհը փակ էր մտամուրը կնոջ առաջ, ո՞չ մի
եղբ. տանը ծախելու իր չէր մնացել, բոլորը
ծախւած կամ գրաւ էր գրւած: Նա պատրաստ
էր տանել, գրաւ դնել հողի վերարկուն էլ, եթէ
ուշ չը լինէր և գրաւատները բաց լինէին:

Յուրտը սաստիկ էր, թէև գերձակուհին այդ
չէր զգում. նա քայլում էր շտապով, որովհետև
Սուրէնը տանը մենակ սպասում էր:

— Տէր Աստուած, ինչպէս գնեմ ես նրա հա-
մար վաղը մի պատկերազարդ գիրք, — մտածում
էր նա և դիտէր որ եթէ երեխան խոստացած
ընծան չը ստանայ, պիտի աւելի տկարանայ:

— Ո՛հ, իմ անգին, իմ անուշ բալա, — հեծում
է անմխիթար մայրը: Նրա ոտները ցրտից և
յողնածութիւնից արճճի պէս ծանրացել էին:
Վերջապէս նա մօտեցաւ իրանց տանը, կանգ
առաւ, աշխատեց հողեկան յուզմունքը հանգըս-
տացնել և ապա ներս մտնել:

Այդ վայրկեանին նրա ականջին լսելի եղաւ

շուրջը, տեսաւ մի սպիտակ կատուի ձագ, որ կծկելէ քր գետնայարկի լուսամտում և ցրտից դողում էր. դերձակուհու գուլթը շարժեց:

— Խեղճ կենդանին այստեղ ցրտից և սովից կը սատկի, — ասաց նա և իսկոյն իր ձեռն առաւ նրան: Նոյն ըոպէին մի գեղեցիկ միտք ծագեց նրա գլխի մէջ. — Ահա լաւ ընծայ իմ Սուրէնիկի համար:

Կատուն զրկած բարձրացաւ նա տան սանդուխտով, բացեց կամացուկ նախասենեակի դուռը, ականջ զրեց. սենեակում կատարեալ խաղաղութիւն էր տիրում և Սուրէնը խորը քնած էր:

Անսխալէս նա կատուին կերակրեց կաթով, փռեց վառարանի մօտ մի շոր և պառկեցրեց կատուին:

Երբ նա նորից սենեակը մտաւ, Սուրէնը մահճակալի վրայ անհանդիստ աջ և ձախ կողքի վրայ շուռ էր գալիս: Սաստիկ տենդի մէջ նա անկապ զառանցում էր:

Մայրը նստեց նրա կողքին՝ աթոռի վրայ, գլուխը զրեց աթոռի կռնակին և անթարթ աչքերով սկսեց նայել իր գաւակի գունատ դէմքին:

— Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ այս միսթարութիւնն էլ կը խլես ինձնից, — մտածում էր նա շարունակ և արտասուրը ազատ ծորում էր նրա այտերովը:

Հիւանդը գիշեր ծանր անց կացրեց. միայն մէկ անգամ նա գարթնեց մինչև առաւօտ, խուլ

վրայ: Մայրը մի ըոպէ աչքը չը խփեց:

Երբ լուսացաւ, ձմեռայ արևը իր թեր ճառագայթները զցեց դերձակուհու սենեակի լուսամուտով սենեակի ներսը, ուղիղ երեխայի մահճակալի վրայ: Սուրէնը յանկարծ վեր թռաւ տեղից ու նստեց անկողնու մէջ:

Մայրը նրա մօտ չէր. նա նայեց իր կողքի աթոռին, նայեց սեղանին, նայեց բարձի տակ, — ո՛չ մի ընծայ, ո՛չ մի պատկերագարդ զիրբբայց այդ ըոպէին նախասենեակի դուռը բացւեց և շեմքին երևաց մայրիկը: Նա ձեռքին բռնած ունէր մի սիրուն կատուի ձագ՝ մաքուր լացած, կապուտ ճապաւէնը վզին կապած:


— Ահա, տես, իմ աչքի լոյս, բեղ ինչ ընծայ եմ բերել: Չատ տարի այսօրին հասնես՝ առողջ և ուրախ: Արի, ինն անգամ համբուրեմ. չէ որ դու այսօր ուղիղ ինը տարեկան ես:

Երեխայի գունատ դէմքն ուրախութեամբ լցեց: Նա հրճանքով նայում էր կատուին: Կենդանի կատու. ո՛րքան նա սիրուն էր նկարած կատուից:

Մայրը մօտեցաւ, ինն անգամ հատ-հատ ջերմ համբուրեց Սուրէնին և վերմակի վրայ զրեց կատուին:

Տղան ուրախութիւնից ասելու խօսք չէր գտնում. և աչքերը լայն — լայն բացած՝ նայում էր փոքրիկ կենդանուն, որը սաստիկ գոհ էր որ տար սենեակ էր ընկել և փափուկ անկողնու վրայ

և գլուխը երկարացնելով՝ բեխանոր դունչը թափահարեց, տղան յանկարծ այնպէս ծիծաղեց, որ թշուառ մայրը մոռացաւ իր ամբողջ վիշտը և



Նոյնպէս սկսեց նրա հետ ծիծաղել:
— Մայրիկ, մայրիկ, տես, տես, ինչպէս

Սուրէնը փորձեց շոյել կատիկին, և կրկին ծիծաղեց: Չազը մի քայլ արեց դէպի նա և յանկարծ բռնեց տղայի մատը, գլուխը մէջքի վրայ ու սկսեց իր թաթերով խաղալ նրա ձեռքի հետ:

— Օհօ, ինչ շուտով սիրեց քեզ, — նկատեց մայրը և գմայլած աչք չէր հեռացնում իր որդուց:

— Իսկ ես պակաս եմ սիրում վիսիկին, — պատասխանեց Սուրէնը և խնդրեց որ իրեն շուտով հագցնեն վերի բլուզը, որ կարողանայ երկար նստել:

Մայրիկը անմիջապէս կատարեց նրա խընդիւրբը:

Մի նոր ուրախութիւն էր Սուրէնիկի համար, երբ իր բաժին կաթից մի քիչ ածեց ամանի մէջ ու սկսեց կերակրել կատիկին: Փեսիկը կծկեց և սկսեց իր երկար ու նեղ լեզուով կաթը լսկել: Յետոյ՝ երբ կշտացաւ, փրշտացրեց ու դունչը թաթիկով երկար սրբում էր:

Ամբողջ առաւօտ Սուրէնը չէր դադարում ծիծաղելուց: Կատի ամեն մի շարժումը նրան զարճալի էր երևում, իսկ մօրն այնպէս էր թրտում, թէ այդ օրը մեռած ամուսինն էլ իրենց հետ է, նա էլ է նայում պատի վրայից պատկերի սև շրջանակի միջից, և խեղճ կինն առաջին անգամ այդ ամբողջ սուգի տարում ուզեց երգել, երգել այնպէս, ինչպէս երգում էր անցեալ տարի Սուրէնի ծննդեան օրը:

Կէսօրը արդէն մօտ էր, երբ դերձակուհին

Նրան պառկել, մի քիչ հանգստանալ: Սուրէնը շուղեց քնել, մինչև որ մայրը թոյլ չը տուեց՝ պառկեցնի փխսիկին էլ իր կողքին, տախտի վրայ: Եւ մի ձեռքով շարունակ շոյելով ձագի բրդոտ մէջքը ու նրա հետ մի ինչ որ երգի եղանակ մոմուալով՝ տղան աննկատելի կերպով քնեց, քնեց խաղաղ և երկար քնով:

Մայրը ձեռները ծալած՝ կանգնած էր դիմացը ու սեղանին կրթնած՝ ականջ էր դնում Սուրէնի շնչառութեանը: Երեսայի կուրծքը հանգիստ բարձրանում իջնում էր, շրթունքները ներքեմն ուրախ ժպտում էին, թշերի վրայ կարծես՝ մի ինչ որ թեթև կարմրութիւն էր երևում, իսկ ձեռքը շարժւում էր, կարծես ուզում էր ձագուկին շոյել:

Եւ կնոջ սրտի մէջ ծնւում էր մի յոյս, որ որդին փրկւած է:

Ճաշից յետոյ եկաւ բժիշկը: Դռնից որ մըտաւ, նա տեսաւ Սուրէնին մահճակալի վրայ նստած, կատի ձագի ոտիւնների վրայ բարձրաձայն ծիծաղելիս. կատուն վազկում էր թելի կոճի ետևից ու կայտառ խաղում:

—Ս. յ դու չարածճի, իմացայ վերջուպէս թէ ում համար էիր պահում քո ուրախութիւնը:

Բժիշկը սկսեց հիւանդին քննել, և քանի տւելի էր քննում, այնքան աւելի սրբախ էր դատնում:

—Ատոնս. ախր ես ասում էի՝ ոտ կտրիճ

3149

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0516435

